դանան ճանաչել իրենց հոգւոց և մարմնոց պէտքն ու պահանջը, ճանաչել իրենց անձն, այն է ճանաչել իրեն՝ ինչպէս փիլիսոփայն ասէ՝ «Ծանիր զքեզ», ճանաչել իւր որդւոց և ընտանեաց, ճանաչել իւր գրացուն, և վերջապէս ճանաչել իւր ազգին, և եթէ հնար է, ճանաչել իւր ընկերին, այն է՝ առանց խորութեան կրօնի՝ մարդոյն։

Այս է ժամանակիս պահանջը, և մեր ազգը աչքը անկած՝ անհամբեր կարօտով սպասում է լսել քարոզ սուրբ Էջմիածնայ ճեմարանի մէջ ուսումն աւարտողներից, որք երիտասարդ լինելով՝ թարմ են իրենց կեանքով, կարողութիւնով և խօսքերով. ուրեմն ժամանակն է ճեմարանի դասական առարկայից մէջ իբրեւ կարեւոր ուսումն մուծանել եկեղեցական բեմբասացութիւնը և առնաբանութիւնը, որովք կարողանայ մեր ժողովուրդը հոգեւոր սնունդ և բաւականութիւն առնալ։

Մինէ պէտք ու պահանջ չէ Տփխիսի Հայոց՝ ամենայն կիւրակէ և տօն օրերին քարոզ լսել, Ուխտաբանի ձայն լսել և դպաստանալ աշխարհային չարայլ կենցաղավարութիւնից և մոլորութիւնից։

Մինէ ժամանակը չէ, որ մեր հոգեւոր իշխանութիւնը քարոզիչ վարդապետներ նշանակէ Տփխիսի նման մի հայաշատ 24 եկեղեցի ունեցող քաղաքին, նմանապէս և միւս քաղաքներին։

Մի թէ մեր Հայ լրագրաց խմբագիրներին պարտք ու պէտք չէ ժողովրդեան հոգեւոր սնունդ տուող առարկայի վրայ խօսել։

Ասում են «ժողովուրդը սառել է եկեղեցուց և հոգեւորականներից». ինչո՞ւ. ըստ որում Մովսէս Խորենացւոյ ողբի մէջ դրած է նման են եղել հոգեւորականք և աշխարհականք . . . Կարծես Տփխիսի մեր ժողովուրդը սուրբ Սարգսեան են կամ սուրբ Գէորգեան, և ոչ Լուսաւորչեան։ Լսեցէք։ Հետամուտ լինողը կ'իմանայ, թէ մեր ժողովրդականը ո՛րքան քարոզ են պէտք, որ մօտեցնեն Ուխտաբանի հոգւոյն և ճշմարտութեանը։

Հոգեւոր իշխանութեան պարտքն է ուշ դարձնել ժողովրդեան հոգեւոր պիտոյից վրայ՝ մանաւանդ Տփխիս և Բաղու քաղաքներում։